# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**հոկտեմբերի 2019 թվականի N -Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի ««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

- Որոշման N 2 հավելվածում՝

ա. 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13-րդ ենթակետով.

«13) 100 հազար դրամ և ավելի գումարով ամենամսյա վարկեր սպասարկելը»,

բ. 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20-րդ ենթակետով.

«20) հարմար աշխատանքից հրաժարված անձ Գ95 10»,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.2-րդ կետով.

«16.2. Ընտանիքի որևէ անդամի՝ 100 հազար դրամ և ավելի գումարով ամենամսյա վարկեր սպասարկելու հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն է գործում $K_{վարկ}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք: Սույն պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{վարկ}$-ն հավասարվում է 1.0-ի:»,

դ. 19-րդ կետի բանաձևը «$K_{բգ}$» տառերից հետո լրացնել «x $K_{վարկ}$» տառերով.

2) Որոշման N 3 հավելվածում՝

ա. 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20-րդ ենթակետով.

«20) հարմար աշխատանքից հրաժարված անձ Գ95

պահանջվող փաստաթուղթը՝ եզրակացություն (տվյալ) ստացված զբաղվածության տարածքային կենտրոնից.»,

բ. 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.4-րդ ենթակետով.

«6.4) հարմար աշխատանքից հրաժարված անձ է համարվում այն գործազուրկը կամ առանձին խմբի գործազուրկը կամ որևէ սոցիալական խումբ չունեցող անձը, որի վերաբերյալ զբաղվածության տարածքային կենտրոնը տրամադրել է հարմար աշխատանքից հրաժարվելու վերաբերյալ եզրակացություն.»,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 19.2-րդ կետով.

«19.2. Ընտանիքի որևէ անդամի՝ 100 հազար դրամ և ավելի գումարով ամենամսյա վարկեր սպասարկելու հանգամանքն ամրագրվում է «Վ» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:»,

դ. 20-րդ կետում «19.1» թիվը փոխարինել «19.2» թվով,

ե. 20-րդ կետի 1-ին ենթակետում «19.1-ին» բառերը փոխարինել «19.1-19.2 -րդ» բառերով,

զ. 31-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքի աշխատանքի անցած անդամներին վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները՝ գործատուի կողմից տրված տեղեկանքի հիման վրա՝ աշխատանքի ընդունվելու ամսվան հաջորդող վեց ամիսների համար: Ընդ որում սույն նորմը նույն անձի համար կրկին կարող է կիրառվել առնվազն երեք տարի անց:»,

է. 34-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «է» պարբերությամբ.

«է. ընտանիքի որևէ անդամի՝ 100 հազար դրամ և ավելի գումարով ամենամսյա վարկեր սպասարկելու հանգամանքի մասին.»,

ը. N 4 ձևի 33-րդ կետում «19.1» թիվը փոխարինել «19.2» թվով,

թ. N 7 ձևը «Բնական գազ» պարբերությունից հետո լրացնել «100 հազար դրամ և ավելի գումարով ամենամսյա վարկեր սպասարկող» պարբերությամբ.

3) Որոշման N 5 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-րդ

կետով.

«2.1. ընտանիքի տնօրինած անասնատեսակի և դրա քանակի մասին տեղեկանքում չեն ներառվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման N 16 հավելվածով նախատեսված՝ անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրման ծրագրով ձեռք բերված կենդանիների մասին տվյալներ՝ տվյալ ընտանիքի վերաբերյալ կնքված պայմանագրի գործողության ժամանակահատվածի համար»:.

4) որոշման N 7 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ կետով.

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10. | «ԱՔՌԱ Քրեդիտ Ռե փորթինգ» ՓԲԸ | 100 հազար դրամ և ավելի գումարով ամենամսյա վարկեր սպասարկելու հանգամանք | Տվյալներ 100 հազար դրամ և ավելի գումարով ամենամսյա վարկեր սպասարկողների մասին | յուրաքանչյուր ամիս | յուրաքանչյուր ամսվա 25-ը | առցանց՝<br>վեբ ծառայ<br>ւթյան<br>միջոցով |

».

2. 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: